ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝_Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը՝ կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում

Ազգանուն, Անուն, Հայրանուն՝ Դոխոլյան Գայանե Հայկազի

Հաստատության անվանում՝ ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի <<Ամալյա Կարապետյանի անվան թիվ 5 մանկապարտեզ>> ՀՈԱԿ

Խմբի ղեկավար՝ Լ. Պողոսյան

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն **3**

Գլուխ 1՝ Ինտեգրված պարապմունքների նշանակությունը.....**5**

Գլուխ 2՝ Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը…….....……**10**

Եզրակացություն ……..……..**21**

Առաջարկություններ ……**22**

Օգտագործված գրականության ցանկ ……**23**

Հավելվածներ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Նախադպրոցական դաստիարակությունը միտված է ապահովել երեխայի մտավոր, սոցիալական, ֆիզիկական, հուզական, գեղագիտական, ներդաշնակ և համակողմանի զարգացումը: Այդ զարգացմանը նպաստող տարածված միջոցներից է ինտեգրված պարապմունքը: (Նախաշավիղ 2016 [2 էջ 39] Այս պարապմունքները օգնում են ձևավորել կարողունակ հասարակություն: Ինտեգրված պարապմունքները վերլուծում են երևույթները բազմակողմանի և բազմաշերտ: Կյանքում ամեն ինչ փոխկապակցված է և ոչինչ մեկուսի գոյություն ունենալ չի կարող: Երեխաներն աշխարհն ընկալում են որպես մեկ ամբողջականություն: Նրանք ակտիվ սովորողներ են և ձգտում են ամբողջությամբ ճանաչել իրենց շրձապատող աշխարհը:Երեխանեեն իևենց գիտելիքները կառուցում են հասակակիցների, մեծահասակների և ծնողների հետ փոխհարաբերությունների, ինչպես նաև ֆիզիկական և հասարակական միջավայրի ակտիվ ուսումնասիրության միջոցով: (Նախաշավիղ 2016 [5 էջ 35]) Ինտեգրված պարապմունքները կարելի է անցկացնել տարբեր ծրագրային բաղադրիչներից: Այս պարապմունքները միավորում են տարբեր բաղադրիչների մասնագետների ուժերը և ստեղծում միջառարկայական կապերով հարուստ պարապմունքի օրինակներ:

Թեմայի նպատակը: Այս թեմայի նպատակն է կարևորել ինտեգրված ուսուցման նշանակությունը կրթության որակի բարձրացման գործընթացում, միջառարկայական կապերի հիման վրա առարկայի կամ երևույթի համակողմանի ուսումնասիրումը, շրջապատող աշխարհի ընկալումը՝երեխաների ճանաչողական գործընթացներում:

Այս պարապմունքներին կարելի է ինտերգրել մանկավարժական գործընթացի ցանկացած բաղադրիչ՝ նպատակ, բովանդակություն, ուսուցման մեթոդ և միջոց:

Տարիքային չափորոշիչներին համապատասխան կազմակերպված ինտեգրված թեմատիկ պարապմունքները օգնում են երեխաների մեջ զարգացնել շարժողական,

խոսքի և հաղորդակցման, իմացական և ինքնասպասարկման ոլորտների համապատասխան կարողություններ:

Թեմաներն ընտրվում են տարիքային չափորոշիչներին համապատասխան, հաշվի է առնվում երեխաների կարիքները, խնդիրները և հետաքրքրասիրությունները: Երեխան բարձրարժեքություն է: Ճիշտ կազմակերպված թեմատիկ ինտեգրված ուսուցման ժամանակ երեխաները սովորում են սովորել ամբողջ կյանքի ընթացքում:

Գլուխ 1՝ Ինտեգրված պարապմունքների նշանակությունը

Անհրաժեշտություն առաջացավ փոփոխել նախադպրոցական չափորոշիչները, համապատասխանեցնելով այն ժամանակակից պահանջներին և հիմնախնդիրներին:

Նախադպրոցական տարիքի երեխաների համակողմանի և ներդաշնակ զարգացումը ենթադրում է նրանց ընդունակությունների բացահայտումը, իմացական հետաքրքրությունների խթանում և ինքնուրույնության ձգտում: Պարապմունքը նախադպրոցական ուսումնական գործունեության կազմակերպման ձևն է, սակայն խաղը << բնական, օրգանական պահանջն է, նրա լրջությունը, նրա էությունը>>, այսպես է արտահայտվել հայ մեծանուն բանաստեղծ, գրող Հ. Թումանյանը: Յուրաքանչյուր երեխա խաղի միջոցով ձգտում է ինքնահաստատվել հասակակիցների միջավայրում: Ինչպես ասել է Կ. Դ. Ուշինսկին <<երեխան խաղի ընթացքում փորձարկում է իր ապագա կյանքը և փորձում սեփական ուժերը>>: (Նախաշավիղ 2014 [2 էջ 26]

2. Ուսուցման ընթացքում պարապմունքն ու խաղը պիտի լրացնեն միմյանց և ներկայանան համատեղ: Այն պետք է լինի երեխայակենտրոն, այստեղ երեխան պիտի փորձարկի, գտնի և ապացուցի բազում օրինաչափություններ:

3.ժամանակակից ուսուցման ծրագրային բաղադրիչների նպատակն է յուրաքանչյուր երեխայի անկրկնելիության և անհատականության բացահայտումը, բազմակողմանի զարգացումը, կարողունակությունների և հմտությունների ձեռքբերումը: Այն ապահովում է՝

- Երեխայի ակտիվ մասնակցությունը ուսուցման գործընթացին՝ ուսուցման փոխգործուն (ինտերակտիվ) մեթոդների կիրառման միջոցով
- Մենախոսական գործելաոճի փոխարեն երկխոսության և համագործակցության հաստատմամբ (կարուսել մեթոդ)

- Ուսուցումը իրականացնել երեխայի նախասիրությունների և հետաքրքրությունների հաշվառման հիման վրա, որը կնպաստի փոխըմբռնման մթնոլորտի ստեղծմանը
- Կազմակերպել համատեղ ուսումնական գործունեություն, որտեղ երեխաները և մանկավարժը նույն հարթության վրա են և մանկավարժը այստեղ ուղղորդող է, ավագ ընկեր, խորհրդատու:

Բարձր արդյունավետություն ունեն ինտեգրված պարապմունքները: Այս պարապմուքի ձևը ոչ ստանդարտ է և այն կարող է իրականացվել տարբեր առարկաներ միմյանց հետ կապելով՝ ինտեգրելով՝ օրինակ, կարելի է ինտեգրել առարկաների բովանդակությունը՝ պահպանելով առաջատար առարկայի ուսուցման մեթոդները: Ինտեգրել՝ նշանակում է համատեղել գիտելիքները տարբեր ծրագրային բաղադրիչներից հավասար հիմունքներով, սակայն միևնույն ժամանակ լրացնելով միմյանց երաժշտության, գրականության, կերպարվեստի միջոցով:

Ուսուցման գործընթացը փոխներգործություն է, որի արդյունավետությունը պայմանավորված է մանկավարժական հաղորդակցման ոճով, երեխաների և մանկավարժների փոխհարաբերություններով: Ինտեգրված պարամունքները դարձել են ժամանակի պահանջ: Ուսուցման այս ոճը համապատասխանում է ժողովրդավարական հասարակության պահանջներին: Ժողովրդավարական հաղորդակցման ոճին համապատասխանում է անհատակողմնորոշիչ մոդելը: Մոդելի հիմքում ընկած է մարդասիրական, անձնային մոտեցումը երեխային, հավատն ու վստահությունը նրա ներքին ուժերի հանդեպ: Ուսուցման անհատակողմնորոշիչ մոդելի հիման վրա կառուցվում են ուսուցմանան ժամանակակից մեթոդները: Ուսուցման ընթացքում կիրառվում են ուսուցման խնդիրների առաջադրման և լուծման տարբեր եղանակներ, մեթոդներ:

Արդյունքում երեխան ինքն է փնտրում, գտնում, ինքնուրույն ձեռք բերում գիտելիքներ և կարողություններ: Այս պարապմունքի առավելություններն են՝

- Երեխան հանդես է գալիս մեծահասակից անկախ, ինքնուրույն սովորողի դերում:
- Երեխայի գիտելիքներն ու կարողությունները ձևավորում են ինքուրույն որոնողական գործունեության ընթացքում :
- Այն նպաստում է համատեղ, փոխադարձ ուսուցմանը և ինքնուսուցմանը
- Նպաստում է բարձրաձայն հարցադրումներին, մտքերի, կարծիքների ազատ արտահայտմանը և փոխանակմանը:
- Խթանում է երեխաների ոչ միայն մտածական, այլև իմացական գործունեությանը:

Կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում ինտեգրված պարապմունքները երկարաժամկետ գործընթաց են, որը հնարավորություն է տալիս հստակ գնահատել երեխայի անհատական առանձնահատկությունները: Ինտեգրված պարապմունքների առավելությունն այն է, որ երեխային ներկայացվում են նույն դիդակտիկ նպատակին ծառայող գիտելիքներ՝ տարբեր ոլորտներից:

Այսպիսի պարապմունքների ընթացքում երեխաների մեջ ի հայտ են գալիս քննադատական մտածողությունը, հետաքրքրասիրությունը, անմիջականությունը, զարմանքը, երևակայությունը և աշխատանքից էսթետիկական հաճույք ստանալը: Բոլոր երեխաներն ունեն այս հատկությունները փոքր հասակում, այս հատկությունները կարևոր դեր են խաղում սովորելու գործընթացում: Այս նպատակին հասնելու ուղին ուսումնառությունը թեմատիկ ուսուցման միջոցով կազմակերպելն է: Ինտեգրված պարապմունենը կարևորում են գործունեության այն ձևերը, որոնք պահանջում են ինքնուրույն մտածողություն, նախաձեռնություն, հնարամտություն, անձնական կարգապահություն, շրջապատում կատարվող փոփոխությունների ճիշտ ընկալում:

Ինտեգրված ուսուցումը ապահովում է երեխայի զարգացման մտավոր, սոցիալական, հուզական, ֆիզիկական և գեղագիտական որակների համակողմանի զագացումը և չի

կենտրոնանում մեկ առանձին ոլորտի վրա, որը արդյունավետ չէ երեխայի զարգացման համար: Ինտեգրված պարապմունքներից շահում են բոլորը: Ծնողները ներգրվում են խմբում կատարվող աշխատանքների մեջ, դաստիարակները ոգևորվում են դասերի նոր բովանդակությամբ և նոր մեթոդներ կիառելու համար ստեղծված գրավիչ հնարավորությամբ, երեխաներն էլ համարվում են գիտակ, յուրօրինակ մտածողներ, որոնց թույլ են տրվում նոր ձևերով դրսևորել իրենց գիտելիքները:

Մանրակրկիթ կերպով պլանավորված և իրականացված ինտեգրված պարապմունքների արդյունքում դրսևորվում են հետևյալ հատկանիշները՝

- Հոգատարություն միմյանց նկատմամբ
- Մտավոր կապերի ստեղծում
- Շփման և երկխոսության հմտությունների կատարելագործում
- Խմբի, համայնքի ձևավոևում

Ինտեգրված պարապմունքը ենթադրում է ուսումնական բաղադրիչների տարբեր բաժինների միավորում՝ գործունեության գործողությունների գիտակցական նպատակադրում, որտեղ ընդգրկված են տարբեր ոլորտներ:

Ինտեգրված պարապմունքի կառուցվածքն այնպիսին է, որ երեխաները տեսնում և հասկանում են ոլորտների միջև եղած կապերը և նրանց կապը կյանքի հետ: Ինտեգրված պարապմունքը հնարավորություն է տալիս պարապմունքը պլանավորել և կազմակերպել երեխաների համար հետաքրքրություն ներկայացնող թեմաների, խնդիրների կամ կենսական հարցերի շուրջ: երեխաները ոգևորվում են այն փաստից, երբ նրանց առաջադրվում է խնդիր կամ ուսումնասիրության ենթակա մի նոր գաղափար: ուսումնասիրվող թեմայի մեջ երեխայի հետաքրքությունը շարժիչ ուժ դարձնելը ապահովում է երեխաների շահագրգռվածությունն ու հետաքրքրասիրությունը:

Ինտեգրված պարապմունքների պլանավորման ժամանակ պետք է հաշվի առնել հետևյալ կետերը՝

- Երեխաների հետաքրքրությունը
- Ստեղծագործական մտքի խթանումը
- Համագործակցությունը, պատասխանատվությունը
- Նոր գիտելիքների ձեռքբերումը և փորձը

Ինտեգրված պարապմունքների ժամանակ թեման համապատասխանեցվում է բաղադրիչների նպատակներին, շեշտը դրվում է երեխաների զննումների ու հետազոտության վրա, կապված է ունեցած փորձի հետ, ապահովում է բաղադրիչների և ոլորտների միջառարկայական կապը, օգնում է նյութը վերակառուցելու և ներկայացնելու, խրախուսվում է երեխայի ինքնուրույն աշխատանքը, գիտելիքի կիրառումը, նպաստում է ինքնուրույնությանը և անհատականացմանը: Ինտեգրված պարապմունքի ժամանակ մեկ թեմայի շուրջ տարվող քննարկումները, զրույցները, խաղերը օգնում են լինել ակտիվ, զգոն, ուշադիր: Այսպիսով ինտեգրված պարապմունքները հնարավորություն են տալիս երեխայի մեջ դաստիարակել որակներ, որոնք անհրաժեշտ են հասուն տարիքում:

Կյանքի առաջընթաց տեմպին համընթաց անհրաժեշտ է մշակել նոր մետոդումներ, մեթոդներ, որոնք հնարավորություն կտան ունենալ կարողունակ, բազմակողմանի զարգացած հասարակություն: Այս համատեքստում մեզ օգնության են գալիս ինտեգրված պարապմունքները և հաստատուն կերպով զբաղեցնում իրենց տեղը կրթության և զարգացման գործում:

Գլուխ 2՝ Ինտեգրված պարապմունքի կազմակերպումը

1.1 Նախադպրոցական կրթության կարևոր նպատակներից է երեխաների քննադատական մտածողության, համագործակցային կարողունակությունների ձևավորումը: Միևնույն ժամանակ մանկապարտեզի հագեցված առօրյան նպաստում է, որ երեխաները դառնան անմիջական, շփվող անհատներ: Այս ամենին հասնելու լավագույն միջոցներից մեկը ուսումնական գործընթացն ինտեգրված պարապմունքների միջոցով կազմակերպելն է: Ինտեգրված պարապմունքները նպաստում են երեխայի համակողմանի զարգացմանը, արդյունքում՝

- Ապահովում է բաղադրիչների միջառարկայական կապը
- Խրախուսվում է երեխայի ինքնուրույնությունը
- Նպաստում է երեխայի անհատականացմանը

Նախադպրոցական տարիքում ձևավորված անձնային կարևորագույն հատկությունները երեխային հնարավորություն են տալիս ինքնահաստատվելու հասարակական կյանքում: Զարգացման այս մեկնարկային շրջանի հաջողություններով է պայմանավորված կյանքի հաջորդ փուլերի առաջընթացը: Այս համատեքստում կարևորվում է մանկավարժի դերը, որը կոչված է իրականացնելու բազում մասնագիտական գործառույթներ: Այս գործառույթներից կարևորվում է պարապմունքների կազմակերպումը մանկավարժական գործընթացում: Պարապմուքների շնորհիվ երեխաները ձեռք են բերում այնպիսի գիտելիքներ ու հմտություններ, որոնք չեն կարող յուրացնել ամենօրյա հաղորդակցման և ազատ գործունեության ընթացքում: Եկել է ժամանակը ավանդականը փոխարինելու ժամանակակից մեթոդներով՝ ինտերակտիվ (փոխներգործուն), որոնց կիրառումն ավելի արդյունավետ է դառնում հատկապես ինտեգրված պարապմունքներ կազմակերպելիս: Ինչպես գիտենք, խելացի, խառնվածքով ինքնամփոփ երեխաներից շատերը իրենց դրսևորում են անհամարձակ և պասիվ: Ինտեգրված պարապմուքների

առավելություններից մեկն այն է, որ երեխաներն այդ ժամանակ դառնում են գործուն և յուրաքանչյուրն զբաղվում է իր առանձնահատկություններին համապատասխանող և իր համար նախընտրելի աշխատանքով: Այստեղ բացառվում է մի երեխայի գերակայությունը մյուսից: (Նախաշավիղ 2013[էջ 6])

Ինտեգրված պարապմունքները նպաստում են նաև մի շարք կարևոր խնդիրների լուծմանը՝ միջառարկայական կապերի ստեղծմանը: Ինտեգրված պարապմունքները ավելի արդյունավետ են, երբ հագեցված են խաղային ժամանակակից մեթոդներով: Խաղի միջոցով ուսումնասիրվող նյութը ապահովում է բարձր տրամադրությունը, հուզական դրական մթնոլորտը և ակտիվությունը, իսկ դրանք կենսական այն գործոններն են, որոնք անհրաժեշտ են երեխայի լիարժեք զարգացման համար: Ինտերակտիվ մեթոդները նպաստում են երեխայի՝ ազատ մտածելու, համարձակ կարծիք հայտնելու կարողությունների զարգացմանը: Դրանք ունեն մի շարք առանձնահատկություններ: Ինտերակտիվ մեթոդները հնարավորություն են ընձեռում

- Արթնացնել երեխաների ճանաչողական և հաղորդակցման կարողությունները
- Բացահայտել յուրաքանչյուր երեխայի անհատական առանձնահատկությունները
- Զարգացնել տրամաբանական մտածողությունը
- Զևավորել վերլուծական կարողություններ:

Հետազոտությունն իրականացրել եմ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի թիվ 5 մանկապարտեզի ավագ խմբում: Այստեղ եմ ծավալում նաև իմ աշխատանքային գործունեությունը:

Ստորև ներկայացնում եմ ինտեգրված ինտեգրված պարապմունքերի օրինակ, որում համատեղվել են առարկայական 3 բաղադրիչ:

Պարապմունքն իրականացրել եմ Ստեփանավանի թիվ 5 մանկապարտեզի ավագ խմբում:

Հետազոտական աշխատանքին ներգրավված էին 4 մասնակից՝

- Հաստատության տնօրեն՝ Նարինե Ղարաքեշիշյանը
- Միջին խմբի դաստիարակ՝ Ն.Ավետյանը
- Կրտսեր 2-րդ խմբի դաստիարակ՝ Մարիամ Քալաշյանը
- Երաժշտության դաստիարակ՝ Լիանա Բախշինյանը

Ինտեգրված պարապմունք

2.1 ՄՏՊ + ԽՋ +Կառուցողական:

Թեմա՝ <<7 թվի կազմությունը>>:

Նպատակը՝

- Ծանոթացնել թվի միավոր կազմին,
- Նպաստել ուսումնական գործընթացի նկատմամբ հետաքրքրության ձևավորմանը,
- Զարգացնել սաների ինքնուրույն գործունեությանը
- Զարգացնել կապակցված խոսքը,
- Նպաստել խոսքի քերականական կառուցվածքի ձևավորմանը,
- Ձևավորել հասակակիցների հետ համագործակցելու կարողությունը,
- Ձևավորել և կատարելագործել կառուցողական աշխատանք կատարելու ունակությունը

Վերջնարդյունք՝

- Նշի առարկաների քանակը,
- Կատարիր պարզ մաթեմատիկական գործողություններ
- Իրականացնի առարկաների մոդելավորում
- Ուղղի համապատասխան հարցեր՝ տեղեկություններ ստանալու նպատակով
- Նկարագրի առարկաներն՝ օգտագործելով ածականներ
- Հասկանա իր առջև դրված խնդիրները
- Ստեղծի հեքիաթի թեմայով սյուժետային պատկեր
- Կապը նախադպրոցական կրթության պետական կրթության չափորոշիչի հետ՝ ԽԳ (բգ) Շ (ժգ)

Մեթոդներ՝ <<Մտագրոհ>>, <<Բութ մատիկ>>, ինտերակտիվ

Անհրաժեշտ նյութերն են՝ կախարդական արկղիկ, տիկնիկ, 7 առանձին փազլ՝ թզուկների նկարներով, 1-10 թվանշանները, կարմիր և կապույտ շրջաններ, էլեկտրոդինամիկական բարձրախոս, <<Թզուկի երգը>>,Թալին <<Գնացքի երգը>> ձայնագրություն:

Երեխաները նստած են կիսաշրջանաձև: Խթանման փուլում դուռը թակում են, երեխաներից մեկը դուռը բացում է և դռան մոտ հայտնաբերում մի կախարդական արկղիկ: Ներս է բերում արկղիկը և զարմանքով այնտեղից դուրս բերում գեղեցիկ հագուստներով <<Սոնա>> տիկնիկին: Տիկնիկը ներկայանում է, ծանոթանում երեխաների հետ և առաջարկում լսել <<Սպիտակաձյունիկը և 7 թզուկները>> հեքիաթը: Երեխաները սիրով համաձայնում են: Ընթացքում հարցեր է ուղղում երեխաներին, ստանում ամբողջական պատասխաններ: Ավարտին առաջարկում է կառուցել փազլ: Երեխաները բաժանվում են 7 փոքրիկ ենթախմբերի, յուրաքանչյուրին առաջադրվում է հավաքել մեկական փազլ թզուկի պատկերով: Ընթացքում

հնչում է Արփինե Բաբայանի <<Թզուկի երգը>> https://www.youtube.com/watch?v=stDXztitQIw

Ավարտից հետո բոլոր 6 թզուկները տեղադրվում են մի սեղանի վրա և հաշվում: Արդյունքում ստանում են 6 թզուկ: Վերջում ավելացնում են ամենավերջինը հավաքած թզուկին և ասում, որ 6 թզուկին ավելացրեցինք ևս մեկը և ստացանք 7 թզուկ: Իմաստի ընկալման փուլում երեխաները զբաղեցնում են իրենց տեղերը: Իմ հարցին, թե ով կառանձնացնի թվաշարքից 7 թվանշանը, երեխաները ձեռք են բարձրացնում և նրանցից մեկը մոտենում է գրատախտակին և առանձնացնում 7 թվանշանը: Հարցերի միջոցով նշում են 7 թվի նախորդ և հաջորդ թվերը, վերհիշում են, որ վեց թզուկ հավաքելուց հետո ևս մեկ թզուկ են ավելացրել և ստացել են 7 թզուկ: Առաջադրվում է հարցեր, թե էլ որ թվերով կարող ենք ստանալ 7 թիվը:

Կազմակերպվում է խաղ՝ <<Բռնիր գնդակը>>: Գնդակը բռնած երեխան մոտենում է գրատախտակին կարմիր և կապույտ շրջանների միջոցով ստանում 7 թիվը և ասում, թե քանի կարմիր և քանի կապույտ շրջան օգտագործեց: Խաղում են այնքան, մինչր ավարտվում է 7 թվի բոլոր տարբերակները: Խաղում են <<Գնացք>> խաղը https://www.youtube.com/watch?v=Ghb5SxDy3S0:

Նախօրոք երեխաներին տրամադրվում է 1-10 թվանշանները, հնչում է Թալինի <<Գնացքի երգը>>, երեխաները հերթականությամբ կանգնում են և շարվում երաժշտության հնչյունների ներքո, կրկնում են 3 անգամ և զբաղեցնում իրենց տեղերը: Կշռադատման փուլում առաջադրվում է հարցեր, թե ո՞վ մեզ հյուր եկավ՝, ի՞նչ հեքիաթ լսեցինք, թզուկները քանիսն էին, ինչպես ստացանք 7 թվանշանը, էլ ինչի հետ կարող ենք ասոցացնել 7 թվանշանը: Օգտագործելով << Բութ մատիկ>> մեթոդը ավարտում ենք պարապմունքը: Տևողությունը 35 րոպե, մասնակցում էին 33 երեխա: (կոլաժ 1)

Պարապմունքն անցավ անկաշկանդ մթնոլորտում, երեխաները մասնակցեցին մեծ հաճույքով, խմբի բոլոր երեխաները ներգրավված էին պարապմունքին: Ապահովվել էր միջառարկայական կապը և կապը կրթության չափորոշիչի հետ: |Այս մեթոդները օգնեցին պասիվ երեխաներին լինել ակտիվ, ներգրաված: Ինտեգրված պարապմունքի կառուցվածքն ու ընտրված ձևը նպատակային էր այնքանով, որ ընտրված մեթոդներն ու խաղային իրավիճակներն օգնեցին հաճույքով և մեծ հետաքրքրությամբ ներգրավվեն իմաստի ընկալման փուլ, որն էլ տարավ արդյունավետ կշռադատման փուլ:

Դիտորդների կարծիքը ինտեգրված պարապմունքի վերաբերյալ այսպիսինն էր՝

Դաստիարակի կողմից հետազոտվող թեմայի կարևորությունը արդիական է նախադպրոցական կրթության մեջ: Այն ամբողջական էր և միտված էր երեխայակենտրոն բազմակողմանի զարգացմանը: Պարապմունքի ընթացքում կիրառեց նորագույն տեխնոլոգիաներ և մեթոդներ, որոնց միջով զարգանում է երեխաների խոսքը, մաթեմատիկական տարրական պատկերացումները, մանր մոտորիկան, մտածողությունը, արագ կողմնորոշվելու հատկությունը, թիմում աշխատելու կարողությունը, սեփական կարծիքը անկաշկանդ արտահայտելու ունակությունը:

Դաստիարակը հասավ իր նպատակին, քանի որ պլանավորված թեման յուրացվեց երեխաների կողմից:

Դիտորդների շրջանում անցկացվեց հարցում.

Հարց 1. Կիրառված մեթոդներից ո՞րն ավելի լավ ընկալվեց երեխաների կողմից.

Հարցվածների 30%-ը համարեց <<Բռնիր գնդակը>> մեթոդը, 50%-ը <<Գնացք>> մեթոդը, իսկ 20%-ի համար բոլոր մեթոդներն էլ ընդունելի և ուսուցանող էր:



Որից հետո հարցում անցկացրի երեխաների մեջ: Երեխաներից 40%-ը ավելի շատ հավանել էր <<Գնացք>> մեթոդը, 30%-ը <<Բռնիր գնդակը>>, իսկ մնացածը 30%-ը հավանել էին կիրառված բոլոր մեթոդները: Ընդհանուր առմամբ բոլոր երեխաները անհամբեր սպասում էին իրենց հերթին, չնայած դրան ընտրում էի ավելի պասիվ ու անհամարձակ երեխաներին:



Ընտրված երաժշտությունը համապատասխանում էր թեմային և լրացնում էր այն:

2.2 Հակիրճ ներկայացնեմ ևս մեկ պարապմունք թեմատիկ ուսուցման համատեքստում: Այս պարապմունքը ևս եղել է ինտեգրված, ներառելով մի քանի ծրագրային բաղադրիչ և ապահովել են միջառարկայական կապը կրթական չափորոշչի հետ: Պարապմունքն անց եմ կացրել մեկ շաբաթվա ընթացքում ավագ խմբում:

Շաբաթվա թեմա՝ <<Սուրբ հացը մեր սեղանի>>:

Մեկ շաբաթ շարունակ երեխաներն ունեցել են հագեցած պարապմունքներ ԻՇԱ+ ԽՋ+ ԿԿԱ+ Ե ծրագրային բաղադրիչներից:

Թեմայի նպատակն էր երեխաներին ներգրավվել հացի ստեցծման գործընթացին, հնչել են երգեր, խաղացել են խաղիկներ, կատարել են ապլիկացիա ընդեղենով, նկարել են ցորենի հասկեր, շաբաթվա վերջում երաժշտության հնչյունների ներքո խմոր են հունցել, գնդեր են արել և թխել են թոքրիկ լավաշիկներ: Մեծ ոգևորությամբ սպասել են թխվելուն և ճաշակել են այն: (կոլաժ 2)

Երեխաների մեջ անցկացված հարցումներից պարզ դարձավ, որ նրանք յուրացրել են նյութը ամբողջությամբ, միևնույն ժամանակ չեն ձանձրացել, խաղացել են, երգել, սովորել են ասացվածքներ, թևավոր խոսքեր, որոնք կիրառում են նաև տանը՝ ծնողների և մեծահասակների մոտ:

2.3Արդյունքների ամփոփում

Արդյունքում ինտեգրված պարապմունքները տվեցին իրենց պտուղները՝ երեխաներն ավելի ոգևորված էին, ծնողները՝ ներգրավված իրականացվող աշխատանքին, մանկավարժներն էլ մոտիվացված:

Այսպիսով ինտեգրված պանապմունքները նպաստում են աշխարհի ամբողջական պատկերի ձևավորմանը, աշխարհընկալմանը:

Ընտրված թեման իր մեջ ներառում է ուսումնական ծրագրի մի քանի բաղադրիչ: Երեխաների մեջ ձևավորում է ճանաչողական հետաքրքրությունը: Սահուն անցումը աշխատանքային գործունեության մի տեսակից մյուսին հնարավորություն է տալիս

յուրաքանչյուր երեխայի ներգրավել ակտիվ պրոցեսի մեջ: Ինտեգրված պարապմունքները միավորում են երեխաներին ընդհանուր տպավորություններով, հուզականությամբ, զգացմունքայնությամբ, խթանում են խմբում աշխատելու կարողությունը: Այս պարապմունքները օգնում են նաև միավորել մի քանի մանկավարժական աշխատող մեկ ընդհանուր գործի, հնարավորություն են տալիս ծնողներին համագործակցել մանկավարժական աշխատողների հետ, այսպիսով ամրապնդվում է ծնող- դաստիարակ կապը: Ի վերջո ինտեգրված պարապմունքները կրճատում են պարապմունքների քանակը, ավելի շատ ժամանակ է տրամադրում զբոսանքներին, ազատ խաղերին, որն էլ իր հերթին նպաստում է երեխաների առողջության ամրապնդմանը: Ինտեգրված պարապմունքների ժամանակ գործածությունից դուրս մնացին ֆիզկուլտ դադարները: Ֆիզկուլտ դադարներին լիարժեք փոխարինեցին ինտերակտիվ մեթոդները:

Եզրակացություն

Այսպիսով հետազոտելով թեման, եկա այն եզրակացության, որ ինտեգրված պարապմունքները առանձնահատուկ և կարևոր նշանակություն ունեն երեխայի բազմակողմանի զարգացման և կրթության մեջ: Այս պարապմունքները օգնում են զարգացնել քննադատական մտածողությունը, տրամաբանությունը, թիմով աշխատելու կարողությունը: Զևավորում են նաև մարդկային այնպիսի որակներ, ինչպիսիք են ապրումակցելը, կարեկցանքը, պատրաստակամությունը, դժվարին իրավիճակում ընկերոջը օգնելը: Ինտեգրված պարապմունքների ժամանակ երեխան դառնում է ավելի ինքնավստահ, համարձակ: Համարյա բոլոր պարապմունքները իրականացնում եմ ինտեգրված, որովհետև այսպիսի պարապմունքներն ավելի հետաքրքիր են, ավելի խորքային, որտեղ կենտոնում երեխան է, իսկ մենք՝ դաստիարակներս ուղղորդողն ենք, ավագ ընկերը: Ինտեգրված պարապմունքներում կիրառել եմ բազմաթիվ փոխներգործուն մեթոդներ՝ չնայած այստեղ ներկայացրել եմ մի քանիսը: Դեռևս թերի է կրթական համակարգի այս բաժինը, որը պիտի լրացվի կրթական գործին լծված նվիրյալների գաղափարներով: Պարապմունքներից բացի երեխաների զարգացմանը և կրթական գործընթացին նպաստում են դիտումները, էքսկուրսիաները, տոները, ծեսերը և փոքրիկ ցերեկույթները: (կոլաժ 3)

Ի վերջո մանկապարտեզը այն փոքրիկ մոլորակն է, որտեղ ոչ միայն երեխաներն են ստեղծագործում, այլ նաև մենք՝ մանկավարժներս:

Առաջարկություններ

Ինտեգրված պարապմունքների թեման կարողունակահեն կրթական համատեքստում ուսումնասիրելով և վերհանելով դեռևս թերի գործընթացը, առաջարկում եմ ավելի հաճախ կազմակերպել վերապատրաստումներ, հնարավորություն ընձեռնել մասնակցել կրթական ֆորումներին, տրամդրել ծրագրային բաղադրիչներին համապատասխան պատրաստի պարապմունքների նմուշ – օրինակներ, մեդիակրթությունը բարելավելու համար համապատասխան սարքավորումներ:

Առաջարկությունները սուբյեկտիվ են:

Օգտագործված գրականության ցանկ

1.Այլընտրանքային մոդելներով 5-6 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության կազմակերպումը 2011

2.Մանկապարտեզի ավագ խմբի 5-6 տարեկանների կրթական համալիր ծրագիր

3.Նախադպրոցական կրթության հիմնական ծրագիր ավագ խումբ 5-6 տարեկան ավագ խումբ 2021

4.Նախաշավիղ 5,6 2013

5.Նախաշավիղ 2, 2014

6.https:\\www.prodlenka.org\metodicheskie-razrabotki\83505-integrirovannye-zanjatija-kak-sredstvo-razvit

Հավելվածներ

Կոլաժ 1

Կոլաժ 2

Կոլաժ 3